

222-3. Եկեղեցիք Ստյ.– Զգլխաւոր եւ զԱ. եկեղեցւոյն՝ զհաստուած շինուածոյն, ընթերցաք՝ իլեր անդր (538) ըստ բանից Ժամանակագրին, որ յիշէ եւ անագան ուրեմն յամի 1642՝ խասանութենէ կործանեալ զերկոսին սինս նորին: Իսկ վասն երկրորդի մեծի եկեղեցւոյն ասէ. «Արքային Հեթմոյ հայրն Կոստանդին՝ նմանապէս շինեաց զսագաշէնն զՍուրբն Սովի, եւ զարդարեաց զնա գոյնզգոյն երանգօք,՝ իպայծառութիւն տեսողացն. եւ՝ ի յաւագանին կողմն՝՝ իդրուց արձան կանգնեաց, եւ զանգակ՝ ինմա. եւ զյիշատակարան եկեղեցւոյն՝՝ իդրուց կողմանէ՝ որ հայի՝ իհարաւ՝ գրեալ, զոր ոչ կարդացաք լաւապէս. քանզի սկիզբն՝ յարեւոյ կերեալ է, մասն ինչ՝՝ իմէջ պատի առեալ են. զի առաջի հարաւոյ դրան եղեալ շէնքն, ասեն, թէ Յոնք շինեալ են առ նախանձու, զի զյիշատակարանն ծածկեցեն. սակայն անհաւաստի թուի ինձ. զի այնուհետեւ Հոռոմ ոչ տիրեաց. եւ զոր կարացաք ընթերնուլ՝ այս է. զանուն Հեթմոյ թագաւորին եւ զՊայլ Կոստանդինին, եւ զանուն Կոստանդին կաթողիկոսին եւ Զապել ղշխոյիոյն, եւ զթուականն Հայոց... եւ եկեղեցին այժմ աւերակ է, քանզի տաճարին վերայ փլեալ է, բաց՝ իխորանացն հնգից. եւ անունն Զանկլըի կոչեն, վասն Զանկապուրճին. եւ ապականեալ է մարդով եւ անասնով այժմ. եւ զի յորժամ առին զնա մահմէտականքն՝ զհարաւային Բաժականոցին պատուհանն մէհրապ արարեալ՝ նամագ կարդացեալ են»։– Զմիւս հին եկեղեցին Ս. Մարիանէ շինեալ է ղշխոյն Զապել. «եւ պատճառն, քանզի յաւոր միում մինչ գայր՝ իԲաղանեացն, եւ եհաս՝ իտեղի նոյն եկեղեցւոյն, յանկարծակի իբր՝ իդիւէ հարեալ՝ անկաւ, եւ կոչեաց, թէ Օգնեա ինձ Սուրբ Մարինէ. եւ յորժամ ել անվնաս, ետ շինել՝ իտեղին եկեղեցի՝ յանուն Սրբոյ Մարինէայ. եւ կայ՝ իդրան վերայ կերպն Մարինէի եւ վիշապն, եւ թուական եկեղեցւոյն, որ կոչի այժմ յանուն կուսին: Եւ կացոյց անդ քահանայ, որ որդոց յորդիս եհաս մինչեւ ցՏէր Սարգիս, որ վախճանեցաւ՝ իՌՁԳ Հայոց (1634-5), որ է ութերորդն, եւ էանց ցեղն, որ կոչի Ստեփեկանց եկեղեցին»։– Զեկեղեցւոյն Ս. Յակոբայ գտաւ յիշատակ՝ ի1270 ամէ, յորում գրեալ է անդ աւետարան մի:

Բաց՝ ի16 եկեղեցեաց՝ զորոց յիշատակս կարգեալ էաք՝ իՖեղագրութեանս, գտաք յետոյ եւ յայլ յիշատակարանաց եւ՝ իԺամանակագրէն՝ այլս եւս. (ԺԷ) մի՝ իննագունից եւ նախ քան զՍ. Մարիանէ, շինեալ՝ իԶապել ղշխոյէ, որոյ եւ դիրքն նշանակի, «՝ իհարաւ՝ հայի յԷջմիածին, եւ ընդ